

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/4

18 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Նվեր Կարապետյանի 22.06.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 25.05.2015 թ-ի թիվ 1486 որոշման դեմ:

Քաղաքացի Նվեր Կարապետյանի գանգատում բերված փաստարկները.

29.05.2015թ.-ին քաղաքացի Նվեր Կարապետյանը (այսուհետ նաև գանգատաբեր) Մաշտոցի հարկային տեսչությունից ստացել է 25.05.2015թ-ի թիվ 1486 որոշումը՝ «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարները գանձելու մասին», որով առաջադրվել է 568.968 դրամի ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն, որը կապված գանգատաբերի կողմից 22.11.2014թ.-ին վաճառված «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենայի վաճառքի հետ: Որոշմանը կից հարկային մարմնի կողմից ներկայացվել է նաև «Նախնական հաշվարկ հարկային պարտավորությունների վերաբերյալ», որոնց հետ գանգատաբերը համաձայն չէ, հետևյալ պատճառաբանություններով:

1. Նախ և առաջ հարկային մարմնի կատարված հաշվարկում հաշվի չի առնված այն հանգամանքը, որ 19.05.2015թ-ին գանգատաբերը հարկային մարմին արդեն իսկ ներկայացրած է եղել ԱԱՀ-ի հաշվարկ, իսկ հարկային տեսչության կատարված հաշվարկում դա հաշվի չի առնվել:

2. Առկա է խնդրո առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիրը, որտեղ վաճառքի կոնկրետ արժեք է նշված, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն. «Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել»:

3. Հարկային մարմնի կողմից կատարված հաշվարկների համար հիմք է հանդիսացել մաքսային մարմինների կողմից նշյալ մակնիշի ավտոմեքենայի համար 2014թ-ին կիրառվող մաքսային արժեքը (դա երևում է որոշմանը կցված հարկային պարտավորությունների վերաբերյալ նախնական հաշվարկում), որը ՀՀ ներքին տարածքում կատարված գործարքների համար ռեալ հիմք չի կարող հանդիսանալ:

4. Գանգատաբերի ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում փաստվել է իրավական փաստաթղթերով ֆիքսված գումարից հաշվարկված ԱԱՀ-ն, որի համար կատարվել են համապատասխան վճարումներ, ներառյալ տույժերը և տուգանքները:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ գանգատաբերը խնդրում է վերանայել Մաշտոցի ՀՏ-ի պետի 25.05.2015թ-ի թիվ 1486 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետը, քննարկելով Նվեր Կարապետյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 25.05.2015թ.

դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի գծով կազմում են 568.968 դրամ, որից ապառք 358.405 դրամ, տույժ 67.201. դրամ, տուգանք՝ 143.362 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի հիմքով կատարված նախնական հաշվարկի հիման վրա:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրոյթներով ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 25.05.2015 թ-ին ընդունվել է թիվ 1486 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Նվեր Կարապետյանից 568.968 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Որոշմամբ քաղաքացի Նվեր Կարապետյանից 568.968 դրամ ԱԱՀ-ի գումար գանձման առաջադրելու համար հիմք են ընդունվել հետևյալ փաստական հանգամանքները:

ՀՀ Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայությունից ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ ստացված տեղեկությունների համաձայն քաղաքացի Նվեր Կարապետյանը 01.11.2014 թ-ին և 22.11.2014 թ-ին վաճառել է սեփականության իրավունքով իրեն պատկանող համապատասխանաբար «VAZ 21703-110-01» և «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենաներ: Մասնավորապես, Նվեր Կարապետյանի (վաճառող) և Մաքսիմ Սարգսյանի (գնորդ) միջև 22.11.2014 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի» պայմանագիր, որի համաձայն Նվեր Կարապետյանը Մաքսիմ Սարգսյանին է վաճառել «Mercedes-Benz C 230» մակնիշի 1997 թ-ի արտադրության ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն վաճառված «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենան Նվեր Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանել է (ձեռք է բերվել) 01.11.2014 թ-ից:

Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Նվեր Կարապետյանի կողմից 22.11.2014 թ-ի «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի» պայմանագրով «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենայի վաճառքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն համարվում է ապրանքի մատակարարում, հետևյալ հիմնավորմամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

...

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Քննարկվող դեպքում քաղաքացի Նվեր Կարապետյան կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, այն է՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաների օտարում, որոնցից երկրորդն

օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Մինչույն ժամանակ Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ այն հանգամանքին, որ Նվեր Կարապետյանի կողմից սահմանված կարգով ներկայացվել է 2014 թ-ի 4-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկ, որում մասամբ արտացոլվել է «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենայի վաճառքից առաջացած ԱԱՀ-ի պարտավորությունը, ինչը, սակայն, Որոշումը կայացնելիս հաշվի չի առնվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման՝ հիմք ընդունելով 2014 թ-ի 4-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկում արտացոլված տվյալները:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պնդումներին, որ ԱԱՀ-ի գծով պարտավորությունները հաշվարկելիս պետք է հիմք ընդունվեր ոչ թե մաքսային մարմնի կողմից տրամադրված տվյալը՝ «Mercedes-Benz C 230» մակնիշի 1997 թ-ի արտադրության ավտոմեքենայի մաքսային արժեքի վերաբերյալ, այլ այդ ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագրում նշված գինը, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ քննարկվող դեպքում հարկային մարմինը ղեկավարվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով իրեն վերապահված լիազորությամբ, որի համաձայն. «ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (հարկման բազան) որոշվում է հետևյալ կարգով,

...

6) ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից 20 և ավելի տոկոսով ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ սույն օրենքին համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը»:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 25.05.2015 թ-ի թիվ 1486 որոշումը:
2. ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետին՝ կայացնել քաղաքացի Նվեր Կարապետյանից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարները գանձելու մասին նոր որոշում, հաշվի առնելով նրա կողմից 2014 թ-ի 4-րդ եռամսյակի համար ԱԱՀ-ի հաշվարկ ներկայացված լինելու հանգամանքը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ